

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 142/10

Քաղ.Երևան

20 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. դեկտեմբերի 20-ի նիստում (արձանագրություն N 86/1) քննարկեց «Երեւանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲ ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի կողմից 2010թ. հոկտեմբերի 28-ի «ՊՄԴԱ LUGA ԼՈՒԳԱ» (Հայտի համարը՝ 20100353) բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը (շփոթելու աստիճան նմանությունը): Ուստի, հայտարկվող «ԼՈՒԳԱ» նշանը չի կարող գրանցվել, բանի որ այն շփոթելու աստիճան նման է 3-րդ դասի ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «ԼՈՒԳԱ» («ՄՎ քեմիքլ գրուպ» ՀՁ ՍՊԸ, Երևան, Ա. Ավետիսյանի 36, բն. 58, N 6456) ապրանքային նշանին:

Բողոքում ներկայացված է մերժման հիմքը եւ նշված է, որ 2010թ. սեպտեմբերի 30-ին Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների եւ արդյունաբերական

նմուշների բաժնի կողմից կրկնական փորձաքննության որոշմամբ մերժվել է ապրանքային նշանի գրանցումը:

Հաշվի առնելով վերոնշյալը, հայտատուն սույն դիմումին կից ներկայացնում է նամակ-համաձայնագիր՝ "ՄՎ քեմիքլ գրուպ" ՀՁ ՍՊԸ (Երևան, Ա. Ավետիսյանի 36, բն. 58) ընկերության կողմից, որում նշված է, որ իրենք տալիս են իրենց համաձայնությունը հայտի համար՝ 20100353 «ՄՄԳ ԱՍԳԱ ԼՈՒԳԱ» ապրանքային նշանի գրանցման և օգտագործման համար Հայաստանում հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Որպես ամփոփում իր բողոքի, բողոքարկողը խնդրում է վերանայել (հայտի համար՝ 20100353) «ՄՄԳ ԱՍԳԱ ԼՈՒԳԱ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կայացված կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել այն Հայաստանում հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ «Երեւանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ն ներկայացրել է «ՄՄԳ ԱՍԳԱ ԼՈՒԳԱ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ ապրանքային նշանի գրանցումը մերժվել է, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 3-րդ դասի ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված "ՄՎ քեմիքլ գրուպ" ՀՁ ՍՊԸ «LUGA» ապրանքային նշանին: Նշվեց, որ ապրանքային նշանի մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին: Նշվեց նաեւ, որ «Երեւանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲ ընկերության կողմից ներկայացվել է մի համաձայնագիր, որով ամրագրված է, որ "ՄՎ քեմիքլ գրուպ" ՀՁ ՍՊԸ-ն, (հասցեն ք. Երևան, Ա. Ավետիսյանի 36, բն. 58, հանդիսանալով Վկայագիր N 6456 «LUGA» ապրանքային նշանի սեփականատերը, ի դեմս տնօրեն Մհեր Վարթանյանի տալիս է իր համաձայնությունը (հայտ համար 20100353) «ՄՄԳ ԱՍԳԱ ԼՈՒԳԱ» ապրանքային նշանի գրանցման և օգտագործման համար Հայաստանում հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի անդամը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի, վերջինս հիմք է ծառայում «ՄՄԳ ԱՍԳԱ ԼՈՒԳԱ» ապրանքային նշանի գրանցման համար եւ առաջարկեց հիշյալ ապրանքային նշանը գրանցել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության

գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Երեւանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲ ընկերության բողոքը եւ գրանցել «ՆՄԴԱ LUGA ԼՈՒԳԱ» ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումը ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան